

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԼՈՎԱԿԻԱՅԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ ՕՂԱՅԻՆ ՆԱՂՈՐԴԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՆԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍ-ԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԲՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

15 հունիսի 2010թ.

Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Վ. Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի մարտի 18-ին Երևանում սրորագրված՝ Նայասրանի Նանրապետության կառավարության եւ Սլովակիայի Նանրապետության կառավարության միջեւ օդային հաղորդակցությունների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը համապարասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Նանրապետության Նախագահի՝ 2010թ. մայիսի 20-ի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Նանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՆՆ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի տեղակալ Ա. Մարությանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Նայաստանի Նանրապետության կառավարության եւ Սլովակիայի Նանրապետության կառավարության միջեւ օդային հաղորդակցությունների մասին համաձայնագիրն ստորագրվել է 2010թ. մարտի 18-ին՝ Երեւանում:

Համաձայնագրի նպատակը Պայմանավորվող կողմերի համապարասխան փարածքների միջեւ եւ դրանցից դուրս օդային կանոնավոր հաղորդակցություն հաստատելն է՝ համաձայն Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին 1944թ. դեկտեմբերի 7-ի Չիկագոյի կոնվենցիայի:

2. Համաձայնագրով Նայաստանի Նանրապետությունն սրանձնում է մի շարք պարավորություններ, այդ թվում.

- Սլովակիայի Նանրապետության նշանակած ավիաընկերության կողմից միջազգային օդային կանոնավոր հաղորդակցություններ իրականացնելու համար փրամադրել հետեւյալ իրավունքները՝

ա) առանց վայրէջքի թռչել Նայաստանի Նանրապետության փարածքի վրայով,

բ) Նայաստանի Նանրապետության փարածքում ոչ առեւտրային նպատակներով կատարել կանգառներ,

գ) կատարել կանգառներ Նայաստանի Նանրապետության փարածքում համաձայնագրին կից հավելվածի Երթուղիների ցանկում սահմանված երթուղիների կետերում՝ միջազգային փոխադրումներում ուղեւորներ, բեռ եւ փոստ՝ առանձին կամ համակցված, օդանավ վերցնելու եւ իջեցնելու նպատակով,

- Սլովակիայի Նանրապետության կողմից սահմանված երթուղիներով համաձայնեցված հաղորդակցությունների իրականացման նպատակով մեկ կամ մի քանի ավիաընկերություններ նշանակելու մասին տեղեկություն սրանալուն պես՝ Սլովակիայի Նանրապետության կողմից նշանակված ավիաընկերություններին փրամադրել համաձայնեցված հաղորդակցությունները շահագործելու համապարասխան թույլտվություններ՝ ընթացակարգային նվազագույն հետաձգումներով,

- ապահովել, որպեսզի Նայասարանի Նանրապետության նշանակած ավիաընկերությունները պահպանեն Սլովակիայի Նանրապետության օրենքները, կանոնակարգերը եւ ընթացակարգերը, Եվրոպական համայնքի իրավունքը, որոնք վերաբերում են միջազգային աներոնավիգացիայում ներգրավված օդանավի՝ պետության փարածք մուտք գործելուն, այնպեղ գրնվելուն կամ այնպեղից մեկնելուն կամ նման օդանավի շահագործմանը եւ նավիգացիային,

- վավեր ճանաչել Սլովակիայի Նանրապետության օրենքների եւ կանոնակարգերի, Եվրոպական համայնքի օրենքների եւ կանոնակարգերի համաձայն փրված կամ ճանաչված՝ վավեր թռիչքային պիլոտաժի սերտիֆիկատները, իրավասության վկայականները եւ լիցենզիաները՝ համաձայնեցված հաղորդակցությունները շահագործելու նպատակով,

- վերահաստատել, համաձայն միջազգային իրավունքով նախատեսվող իր իրավունքների եւ պարտավորությունների, որ անօրինական գործողությունների դեմ քաղաքացիական ավիացիայի անվտանգությունն ապահովելու նպատակով Պայմանավորվող կողմերի փոխադարձ պարտավորությունները կազմում են համաձայնագրի անբաժանելի մասը,

- փոխադարձության սկզբունքով Սլովակիայի Նանրապետության նշանակած ավիաընկերությանն ազատել ներմուծման սահմանափակումներից, մաքսափորքերից, այլ հարկումներից, փեսչական վճարներից եւ այլ ազգային փորքերից ու վճարումներից՝ կապված օդանավերի, վառելիքի, քայուղերի, սպառվող փեխնիկական միջոցների, պահեստամասերի, ներառյալ՝ շարժիչների, օդանավի սովորական սարքավորումների, օդանավի պաշարների եւ այլ գույքի հետ, որոնք նախատեսված են օգտագործման համար կամ միմիայն օգտագործվում են համաձայնեցված օդային հաղորդակցությունները շահագործող՝ Սլովակիայի Նանրապետության նշանակած ավիաընկերության օդանավի շահագործման համար,

- Սլովակիայի Նանրապետության նշանակած ավիաընկերությունների կողմից համաձայնեցված հաղորդակցությունների համար գանձվող սակագները սահմանել ողջամիտ մակարդակներով՝ հաշվի առնելով բոլոր հարակից գործոնները:

3. Նամաձայնագրի անբաժանելի մասն է կազմում դրա հավելվածը, որում նախատեսված է երթուղիների ցանկը:

4. Նամաձայնագրով նախատեսվում է Պայմանավորվող կողմերի միջեւ խորհրդակցությունների անցկացում եւ վեճերի կարգավորում՝ արբիտրային դափարան դիմելու միջոցով:

5. Համաձայնագիրը կնքված է երկու բնօրինակով՝ հայերեն, սլովակերեն և անգլերեն, ընդ որում, բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Տարաձայնություններ ծագելու դեպքում նախապարվությունը կտրվի անգլերեն տեքստին:

6. Սահմանադրական դատարանը միաժամանակ նշում է, որ Հայաստանի Հանրապետությունը միացած լինելով Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին 1944թ. դեկտեմբերի 7-ի Չիկագոյի, Օդանավում կտրված հանցագործությունների և որոշ այլ գործողությունների մասին 1963թ. սեպտեմբերի 14-ի Տոկիոյի, Օդանավերի անօրինական զավթման դեմ պայքարի մասին 1970թ. դեկտեմբերի 16-ի Նաագայի, Քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված անօրինական գործողությունների դեմ պայքարի մասին 1971թ. սեպտեմբերի 23-ի Մոնրեալի, Պայթուցիկ նյութերի հայտնաբերման նպատակով նշագրման մասին 1991թ. մարտի 1-ի Մոնրեալի կոնվենցիաներին, որոնց վերաբերյալ սույն համաձայնագրում կան հղումներ, սպեղծել է միջազգային իրավական պարշաճ հիմք՝ երկկողմ արդյունավետ պայմանագրային հարաբերություններ հաստատելու համար:

7. Սույն համաձայնագրի և գործում առկա մյուս փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ համաձայնագրով ստանձնված պարտավորությունները բխում են ՆՏ Սահմանադրության 9-րդ հոդվածի պահանջներից, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2010 թվականի մարտի 18-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Սլովակիայի Հանրապետության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

15 հունիսի 2010 թվականի
ՍԴՈ- 894